ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 օգոստոսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

111
(2961)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը պաշտոնին նշանակվել է 2021 թվականի օգոստոսի 19-ին, սակայն մինչ այդ նա 2015-ից 2018 թվականներին եղել է հրավիրյալ դասախոս Հայ-ռուսական համալսարանի համաշխարհային քաղաքականության եւ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, միեւնույն ժամանակ նույն թվականներին եղել է ընտրական ծրագրերի համակարգող Transparency International հակակոռուպցիոն հասարակական կազմակերպությունում: Գրիգորյանը անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի մասին հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի մայիսի 31-ին, որից տեղեկանում ենք, որ նա 2020 թվականին գնման եղանակով Արաբկիր վարչական շրջանում ձեռք է բերել բնակարան բազմաբնակարան շենքում, ինչը հաշվետու տարվա վերջում պահպանվել է: Անվտանգության խորհրդի քարտուղարը, որպես տրանսպորտային միջոց, հաշվետու տարվա սկզբում հայտարարագրել է 2005 թվականի արտադրության Lexus մակնիշի ավտոմեքենա, ինչը տարվա ընթացքում վաճառել է 7 մլն 350 հազար դրամով: Գրիգորյանը հաշվետու տարվա վերջում հայտարարագրել է 2020 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 11 մլն 500 հազար դրամով: Նրա բանկային հաշիվների մնացորդը հաշվետու տարվա սկզբում կազմել է 908 հազար դրամ, ինչը տարվա վերջում ավելացել է՝ դառնալով 978 հազար դրամ: Գրիգորյանի՝ ստացված վարկի մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 46 մլն 209 հազար դրամ, որը բնակարանի ձեռքբերման հիփոթեքի գումարն է, իսկ փոխառության մնացորդի չափը նույն ժամանակաշրջանում կազմել է 4 մլն 204 հազար դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

2020 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնել էր, որ ՀՀ զինված ուժերի 5-րդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Անդրանիկ Փիլոյանը կարժանանա Ազգային հերոսի կոչման, որից հետո՝2 տարի անց, Փիլոյանը կալանավորվեց: Հակակոռուպցիոն դատարանում Փիլոյանի դեմ հարուցված քրեական գործը վերջնական փուլում է. կողմերը պաշտպանական ճառով են հանդես գալիս, ու առաջիկայում դատարանը կգնա որոշում կայացնելու: Ինչ ճակատագիր է սպասվում Նիկոլ Փաշինյանի կաբինետում նշանակված, հերոսի կոչման արժանացած Անդրանիկ Փիլոյանին՝ դժվար է ասել: Նշենք, որ ըստ մեղադրանքի՝ Անդրանիկ Փիլոյանը, վերջինիս խորհրդականը, ինչպես նաեւ ԱԻ նախարարության 10-ից ավելի աշխատակիցներ, այդ թվում՝ տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ, մեղադրվում են առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, դրան օժանդակելու, պաշտոնեական դիրքը չարաշահելու, խարդախության եղանակով խոշոր չափերով հափշտակություն կատարելու, ինչպես նաեւ խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձատրություն ստանալու, տալու եւ այլ չարաշահումների համար:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



Ներկայացվող ցանկը (Տե՛ս լուսանկարները Armlur.am կայքում) լավագույնս նկարագրում է պետության՝ դեպի որեւէ տեսանելի տեղ չշարժվող բարձրագույն մարմնի դերը եւ կշիռը հեղափոխականների օրոք: Այսպես՝թափուր է նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը (դրա համար ով պատահի՝լուսանկարում է նախագահին տարբեր հանգուցյալների աճյունի ֆոնին): Թափուր են արտաքին կապերի եւ արարողակարգի բաժինների պետերի պաշտոնները: Թափուր են պարգեւների եւ կոչումների, ներքին աուդիտի եւ այլ բաժինների ղեկավարների պաշտոնները: Հարցը, ըստ մեզ, ունի երկու հիմնական հավանական պատասխան՝ կամ «չքայլած» նախագահի համար անընդունելի են Նիկոլ Փաշինյանի հրամցրած կադրերը, եւ նրանք չեն հրամանագրվում, կամ նախագահն ինքը, չունենալով որեւէ զբաղմունք, չի կարողանում հայտնաբերել անձանց, որոնք կհամաձայնեն աշխատել «ոչինչ չանողների հիմնարկում:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Բագրատ սրբազանի առաջնորդած «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդներին «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի» տնօրինությունը այդպես էլ օր չտրամադրեց հանդիպում-միջոցառում կազմակերպելու համար: Մեր տեղեկությունների համաձայն՝շարժման առաջնորդները մերժման նամակ են ստացել մարզահամերգային համալիրի տնօրինությունից, այն պատճառաբանությամբ, որ ազատ օր չկա: Մեզ հայտնի դարձավ նաեւ, որ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը դիմել է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի տնօրեն Կարեն Ղազարյանին, որպեսզի հասկանա՝ինչն է մերժման պատճառը, սակայն նրան մեկնաբանել են, որ դա մերժում չէ, եւ հնչեցված պատասխանը պայմանավորված է ազատ օրի բացակայությամբ: Այնուհետեւ Գառնիկ Դանիելյանը փորձել է հանդիպում կազմակերպել տնօրենի հետ. վերջինս համաձայնել է հանդիպել, սակայն, երբ Դանիելյանը զանգահարել է նրան, տնօրենը չեղարկել է հանդիպումը: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանի հետ՝տեղեկությունը ճշտելու նպատակով: Վերջինս հաստատեց այն՝ասելով, որ զանգահարել է Կարեն Ղազարյանին, նա պատասխանել է, որ քաղաքում չի գտնվում եւ չի կարող հանդիպել: Այսինքն՝ՀՀ իշխանությունները տնօրեն Կարեն Ղազարյանի միջոցով ցանկանում են խոչընդոտ առաջացնել շարժման առաջնորդների եւ աջակիցների համար:

ԶՐՈՒՅՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել է, որ իշխանության ներկայացուցիչները քաղաքական հրահանգ են իջեցրել դատական համակարգ, որ Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Հրայր Թովմասյանին ազատազրկեն. նրանք այդ ճանապարհով փորձում են Հրայր Թովմասյանին հեռացնել ՍԴ-ից:

Կալանքի տանելու համար իշխանությունները պատրաստ են ցանկացած օրենք խախտելու, որպեսզի հասնեն իրենց նպատակին:

Այս հարցի առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Հրայր Թովմասյանի փաստաբան Արսեն Բաբայանի հետ:

-Պարոն Բաբայան, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել է, որ ՍԴ դատավոր Հրայր Թովմասյանին փորձում են ամեն գնով ազատազրկել եւ հեռացնել պաշտոնից:

-Այո՛, իշանությունները վերջնական նպատակ ունեն Հրայր Թովմասյանին թե՛ ազատազրկելու, թե՛ պաշտոնից զրկելու. ամեն կերպ փորձում են վնասել նրան:

-Իսկ հիմքեր ունե՞ն՝ նման գործողությունների գնալու:

-Ո՛չ, հակառակ դեպքում այդքան չէինք շեշտի, որ սա քաղաքական հետապնդում է:

Ավելի վաղ Արսեն Բաբայանն իր ֆեյսբուքյան էջում այս առիթով գրառում էր կատարել. «Դատավոր Տաթեւիկ Գրիգորյանին դատավորի պաշտոնից հեռացնելու բոլոր հիմքերն առկա են:

Հրայր Թովմասյանի գործով ընդամենը 20 որպե տեւած դատական նիստին, այնուհետեւ՝ պաշտպան Արամ Օրբելյանի ասուլիսին հետեւելուց հետո՝ ինձ համար միանշանակ է, որ առերեւույթ առկա են դատավոր Տաթեւիկ Գրիգորյանի լիազորությունները դադարեցնելու հիմքերը: Փաստորեն, հուլիսի 25-ին Տաթեւիկ Գրիգորյանը, Նորայր Փանոսյանի՝ առողջական խնդիրներ ունենալու հիմքով դատարան չներկայանալու պատճառով, քրեական գործը բաժանել է՝ չունենալով դրա լիազորությունը:

Դատաքննության փուլում գործը կարող է բաժանվել մի դեպքում, երբ ամբաստանյալներից մեկի տեւական հիվանդության կամ փախուստի մեջ գտնվելու պատճառով՝ նա չի մասնակցում դատական նիստերին, որի պատճառով էլ խախտվում է մյուս ամբաստանյալի կամ ամբաստանյալների՝ ողջամիտ ժամկետում գործի քննության ժամկետները: Փանոսյանը փախուստի մեջ չի գտնվում, իսկ նիստից բացակայելու հիմքում ընկած հանգամանքները ժամեր անց վերացել են: Փանոսյանի մասով դատավորը միանշանակ արդեն իսկ խախտել է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը:

Այնուհետեւ քմծիծաղով ու ռեպլիկներով է արձագանքել դատական նիստը մինչեւ հաջորդ օրը հետաձգելու՝ Օրբելյանի միջնորդությանը՝ չտալով անգամ մեկ օր ժամանակ, որպեսզի պաշտպանական կողմը պարզի, թե ինչ միջնորդություններ են ներկայացված, որոնց պետք է միանա եւ որոնք պետք է ներկայացնի: Դրանից հետո էլ Հրայր Թովմասյանին ապօրինի կերպով հեռացրել է դատական նիստից, այն էլ՝ 10 ժամով՝ դատախազին «ամենագետ» անվանելու եւ իր ձեռքին պահած քրիստոնեական խորհրդանշով թեւնոցը չթաքցնելու համար: Սրանով դատավորը նպատակ է հետապնդում ավարտել այս գործի քննությունը՝ առանց Թովմասյանին ավարտական ճառ ասելու հնարավորություն տալու: Անձը կարող է հեռացվել դատական նիստից, երբ վերջինս խաթարում է դատարանի բնականոն գործունեությունը եւ այն հնարավոր չէ վերականգնել: Հրայր Թովմասյանին հեռացնելու պահին անգամ նիստ անցկացվել չէր կարող: Դատավորը հանրային պաշտպան է ներգրավել օրենքի կոպիտ խախտմամբ. դատավորի հղումը ՍԴ որոշմանը բացարձակ վերաբերելի չէ այս դեպքին: Հրայր Թովմասյանը չի ծանուցվել օգոստոս 8-ի ու 15-ի նիստերի մասին, եւ դրանով իսկ խախտվել է Հրայր Թովմասյանի՝ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը:

Այս դատավորի գրասենյակի թափթփվածության արդյունքում Արամ Օրբելյանին նիստերի մասին ծանուցումը ուղարկվել է Շարուրի փողոցի ինչ-որ հասցեով: Պարզվում է, որ Օրբելյանը ոչ միայն այդ հասցեում հաշվառված չէ, չի բնակվում, գործունեություն չի իրականացնում, այլեւ անգամ չգիտի, թե ֆիզիկապես քաղաքի որ հատվածում է գտնվում այդ հասցեն: Զավեշտը դրանով չի ավարտվում: Պարզվում է՝ Շարուրի փողոցի հասցեով է ուղարկվել նաեւ նախորդ դատական նիստերի ձայնագրությունների կրիչները, փաստորեն, ինչ-որ մեկը, դրա իրավունքը չունենալով, դրանք ստացել է. իսկ դատավորն էլ իրենից գոհ դեմքով պնդում էր, որ Օրբելյանը նախորդ բոլոր նիստերի մասին պատշաճ ծանուցված է եղել եւ ձայնագրություններն էլ ստացել է:

Զավեշտը սրանով էլ չի ավարտվում: Դատավորը հպարտ դեմքով հայտարարում է, որ Արամ Օրբելյանին տուգանելը օրինական է եղել, քանի որ «տեսեք՝ Օրբելյանը անգամ չի բողոքարկել իրեն տուգանելու որոշումը»: Այս դեպքում էլ պարզվում է, որ այս որոշումը եւս Շերամի փողոցի դեռ չպարզված մարդն է ստացել. դե, եթե տվյալ անձը չի բողոքարկել, ուրեմն Արամը համաձայն է: Ու դատավորը, փոխարենը ներողություն խնդրելու՝ իր ու իր գրասենյակի թափթփված աշխատանքի, անպատասխանատու պահվածքի համար, որով խախտել է դատավարության մասնակիցների մի շարք իրավունքներ, հայտարարում է, որ կրիչները ՎԵՐՍՏԻՆ կտրամադրվեն: Զավեշտը սրանով էլ չի ավարտվում: Այսօրվա (խմբ.) նիստում, երբ արդեն վերջինս ավարտված էր, հաջորդ նիստը՝նշանակված, դատավոր Տաթեւիկ Գրիգորյանը նախօրոք պատրաստած մի «շպարգալկա» հանեց ու սկսեց կարդալ, որից տպավորություն ստեղծվեց, որ դատավորը ներմուծել է մի նոր դատավարական ինստիտուտ, այն է՝ ինքնապաշտպանական ճառ. եթե չիմանայի, որ դատավորը այդ տեքստը կարդում է իր կողմից նախագահվող նիստում, վստահորեն կպնդեի, որ նա այն կարդում է ԲԴԽ-ում իրեն աշխատանքից ազատելու հարցով հրավիրված նիստին:

Դասականը կասեր՝ մի շտապիր, կհասցնես: Այս ամբողջից կարելի է վստահ հետեւություն անել, որ Տաթեւիկ Գրիգորյանը ոչ միայն «դաբրո» ունի՝ նման կերպ վարվելու, այլեւ միգուցե եւ հրահանգ: Հնարավոր է, որ Կարեն Անդրեասյանի օրոք Տաթեւիկը պատասխանատվության չենթարկվի, բայց անդրեասյանները հավերժ չեն, նախորդ իշխանության օրոք էլ բազմաթիվ դատավորներ են եղել, որ Տաթեւիկի պես էին մտածում»:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ՝ԴԱՏԱԽԱՋԻ ԿՈՂՄԻՑ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՍԴ դատավոր Հրայր Թովմասյանը նիստի ընթացքում օգտագործել է «ամենագետ» բառը, որը դատախազը գնահատել է որպես վիրավորական: Այս մասին երեկ՝ օգոստոսի 22-ին՝ Սահմանադրական դատարանի դատավոր Հրայր Թովմասյանի գործով դատական նիստից հետո, լրագրողների հետ զրույցում ասաց պաշտպան Արամ Օրբելյանը՝ խոսելով այն մասին, թե ինչու է Հրայր Թովմասյանը երեկ հեռացվել նիստերի դահլիճից:

«Դատարանը նկատողություն է արել: Հրայր Թովմասյանի ձեռքին եղել է Երուսաղեմից բերված քարաշար, որի վրա կա խաչ, դատարանն ասել է, որ դնի գրպանը: Թովմասյանը փորձել է հասկանալ՝ ո՞ր իրավասության իրացման հետ է կապված տվյալ պահանջը: Ասել է. «Վաղն էլ որ ասեք՝ մազերը կարմիր ներկեք, դա՞ էլ է օրինական պահանջ»: Դատավորը նշել է, թե իրեն հավասար խոսում է, ու հեռացրել է դահլիճից: Հեռացնելու պատճառը պաշտպան ներգրավելն է եղել. հանրային պաշտպանը ներկայացել է երկու նիստի: Ես ընդհանրապես ծանուցված չեմ եղել, որովհետեւ ծանուցումներ են ուղարկվել ինչ-որ անհասկանալի հասցեներով, ինչ-որ մեկը ստորագրել է: Էլ. փոստիս ծանուցումներ եմ ստացել արձակուրդի ժամանակ, սակայն չեմ ստուգել», - պատմեց Արամ Օրբելյանը: Նրա խոսքով՝ դատախազը ենթադրում է, որ կա պաշտպանական թիմի մարտավարություն՝ ձգձգել դատական նիստերը:

Պաշտպանը, սակայն, վստահեցնում է՝ հետաձգելու միջնորդություն ներկայացնելու պատճառն այն է եղել, որ արձակուրդում է գտնվել եւ առաջարկել է արձակուրդից հետո ամեն օր նիստի ներկայանալ: Արամ Օրբելյանի խոսքով՝ դատարանը դեռեւս գարնանն էր տեղյակ այն մասին, որ ինքը երեք շաբաթով արձակուրդում է գտնվելու, սակայն դա հաշվի չառնելով՝ առանձնացրել էր դատական գործերը: Վերջինս միջնորդություն է ներկայացրել նիստը հետաձգելու համար, սակայն «նախագահողի կողմից ռեպլիկների է արժանացել»:

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ Է ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

Օգոստոսի 21-ի երեկոյան Բաքվում ձերբակալվել է երիտասարդ քաղաքագետ Բահրուզ Սամեդովը: Նրա տատիկը՝ Զիբեյդա Օսմանովան Turan-ին պատմել է, որ 16:00-ի սահմաններում Սամեդովը տանից դուրս է եկել՝ ընկերոջ հետ հանդիպելու:

«Կես ժամից 5-6 հոգի եկան մեր տուն՝ ներկայանալով որպես պետական անվտանգության ծառայության աշխատակիցներ, ասելով, որ Բահրուզի դեմ բողոք կա, նա թմրանյութերի հետ է կապված: Նրանք խուզարկեցին տունը եւ տարան Բահրուզի համակարգիչը, նրա անձնագիրը, արտասահմանյան համալսարանների երկու դիպլոմները եւ անգլերեն գիրք, որում կար նաեւ Բահրուզի հոդվածը: Նրանք թմրանյութեր չհայտնաբերեցին»,- պատմել է կինը:

Ավելի ուշ Վաֆա անունով փաստաբանը զանգահարել է եւ ասել, որ Սամեդովը կասկածվում է «դավաճանության» մեջ, իբր, բացահայտվել է նրա նամակագրությունը հայերի հետ, եւ որ հոդվածներ է գրել Հայաստանի պատվերով:

Սամեդովը հայտնի է արեւմտյան լրատվամիջոցներում եւ վերլուծական պարբերականներում Ադրբեջանի իշխանությունների մասին քննադատական հոդվածներ եւ մեկնաբանություններ հրապարակելով:

ԵՎՐՈՊԱՅԻ ԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

Քամալա Հարրիսը պաշտոնապես ընդունել է ԱՄՆ նախագահի պաշտոնում իր թեկնածությունը Դեմոկրատների ազգային համագումարի ժամանակ, եւ նոյեմբերի ընտրություններում հաջողության պարագայում՝ նա կդառնա պատմության մեջ ԱՄՆ առաջին կին նախագահը, գրել է Euronews-ը: Կին առաջնորդները դեռեւս փոքրամասնություն են նաեւ ամբողջ Եվրոպա մայրցամաքում: 50 երկրից միայն 15-ն ունի կին վարչապետ կամ պետության ղեկավար՝ չհաշված միապետները:

ԵՄ-ում նրանց թիվը միայն յոթն է, թեեւ դաշինքի գլխավոր պաշտոններից երեքը կանայք են՝ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենը, Եվրոպական խորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլան եւ Եվրոպական կենտրոնական բանկի նախագահ Քրիստին Լագարդը: Պետության ղեկին կանգնած կանանցից շատերն ունեն իրավագիտական կամ իրավաբանական մասնագիտություն: Եվրոպայի միայն 15 երկիր մինչ այժմ երբեք չի ունեցել ընտրված կին առաջնորդ՝ որպես վարչապետ կամ պետության ղեկավար: Դրանք են Ալբանիան, Անդորրան, Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Կիպրոսը, Չեխիան, Լիխտենշտեյնը, Լյուքսեմբուրգը, Մոնակոն, Մոնտենեգրոն, Նիդեռլանդները, Ռուսաստանը, Իսպանիան եւ Վատիկանը: Դրանցից չորսը (Կիպրոսը, Չեխիան, Նիդեռլանդները եւ Իսպանիան) ԵՄ երկրներ են:

Ըստ ներկայացված տվյալների՝ Հայաստանում խորհրդարանի 36.5 %-ն են կանայք, Ադրբեջանում՝ 18.1%-ը, Վրաստանում՝ 19.3%-ը, Թուրքիայում՝ 19.9-%-ը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔԵՆԵԴԻ ԿՐՏՄԵՐԸ ԿԼՔԻ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԸ

ԱՄՆ նախագահի անկախ թեկնածու Ռոբերտ Քենեդի կրտսերը ծրագրում է մինչեւ այս շաբաթվա վերջ դուրս գալ նախագահական մրցապայքարից, հայտնել է ABC News-ը՝ վկայակոչելով որոշմանը ծանոթ աղբյուրները:

Աղբյուրները պարզաբանել են, որ Քենեդին մտադիր է աջակցել հանրապետական նախագահի թեկնածու Դոնալդ Թրամփին, սակայն երբ ABC News-ի թղթակիցը ուղղակիորեն հարցրել է՝արդյոք նա կաջակցի նախկին նախագահին, Քենեդին պատասխանել է. «Ես դա ոչ կհաստատեմ, ոչ էլ՝ կհերքեմ: Ոչ մի նման բանի մասին խոսք չկա»:

Աղբյուրները նախազգուշացրել են, որ որոշումը դեռեւս վերջնական չէ եւ դեռ կարող է փոխվել, իսկ մի աղբյուր էլ հավելել է, որ Քենեդին հուսով է, որ ամեն ինչ արագ կջնջի, որպեսզի կոտրի «Դեմոկրատական կուսակցության» ազգային համագումարի տեմպերը:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Հայաստանի անվտանգային հարցերի հետ Նիկոլ Փաշինյանը չունի ոչ մի ընդհանուր հայտարար:

Երեկ՝ դատական նիստից հետո՝ լրագրողների հետ զրույցում, ասաց ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը. «Հայաստանին վերաբերող հարցերն ամբողջ աշխարհն է քննարկում առանց Հայաստանի ներկայացուցիչների: Վատ է, որ Հայաստանի ռազմավարական դաշնակիցը Բաքվի հետ է քննարկում հարցերը, բայց այդ վիճակին հասցրել է Հայաստանը:

Հայ-ռուսական հարաբերություններն այնքան փչացած են, այլեւս անդառնալի, որ երկու կողմի պաշտոնյաները կարող են իրենց հաշիվ չտալ, թե որտեղ ինչ են խոսում»,- նշեց նա:

ՊՈՒՏԻՆԸ ՀՐԱՎԻՐԵԼ Է ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը խորհրդակցություն է հրավիրել՝երկրի սահմանամերձ շրջաններում տիրող իրավիճակին առնչվող հարցերի շուրջ:

«Ձեզ հավաքել եմ՝ քննարկելու Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում ստեղծված իրավիճակը»,-նշել է Պուտինը հանդիպման թեման:

Ուկրաինայի զինված ուժերը օգոստոսի 6-ին զանգվածային հարձակում են գործել Կուրսկի շրջանի վրա: Այդ ընթացքում Պուտինը մի քանի անգամ խորհրդակցություններ է անցկացրել՝ Կուրսկի եւ սահմանամերձ այլ շրջաններում օպերատիվ իրավիճակի վերաբերյալ:

Ռուսաստանի նախագահն ընդգծել է, որ ՌԴ ՊՆ-ի առջեւ խնդիր է դրված՝«դուրս բերել, տապալել թշնամուն մեր տարածքներից» եւ սահմանային ծառայության հետ միասին ապահովել պետական սահմանի հուսալիությունը:

ԱՆՋՐՊԵՏ

ԻՇԽԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ՝ ԸՆԴԵՄ ՀԱԵ-Ի

Հայտնի է, որ վերջին տարիներին Հայ Առաքելական եկեղեցու եւ հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայաստանի Հանրապետության իշխանությունների միջեւ հարաբերությունները արված են:

Դեռեւս 2018 թվականին՝Նիկոլ Փաշինյանի թիմի իշխանության գալուց հետո, սկսվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի նկատմամբ վատ վերաբերմունքի տարբեր դրսեւորումներ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին թույլ չէին տալիս ելումուտ անել Մայր Աթոռ, տարածում էին տարբեր տեսակի բացասական խոսակցություններ, վարկաբեկում հայ հոգեւորականությանն ու Հայ Առաքելական եկեղեցու անունը:

Ավելի ուշ անջրպետն էլ ավելի խորացավ, եւ Հայաստանի իշխանավորները դադարեցին մասնակից լինել Սուրբ Ծննդյան պատարագներին, սկսեցին ապրիլի 24-ի առավոտյան առանձին այցելել Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝հակառակ տասնամյակներով ձեւավորված ավանդույթին, առ այն, որ Հայ Առաքելական եկեղեցու եւ իշխանության ներկայացուցիչները միասին են ծաղիկներ խոնարհել անմար կրակի շուրջ:

2023 թվականի դեկտեմբերի 30-ին Հանրային հեռուստաընկերությունը հայտարարեց, որ ամանորի գիշերը Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը եթեր չի հեռարձակվի գիշերը 12:00-ին, եւ փոխարենը այն եթերում կլինի երեկոյան լուրերի թողարկումից անմիջապես հետո. թե ինչու էին հայրենի իշխանությունները պատվիրել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ելույթը տարանջատել երկրի առաջին դեմքի ելույթից, ավելի քան պարզ է:

Կաթողիկոսի եւ հոգեւորականության շուրջ ասեկոսեները չեն դադարում հատկապես «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մեկնարկից հետո: Շատերն առաջին անգամ էին լսում հոգեւորականների, նրանց կյանքի ու կենցաղի, հոգեւորականին դիմելու ձեւերի մասին, նույնիսկ չէին տարբերակում կուսակրոն հոգեւորականին քահանայից եւ չէին պատկերացնում, թե ինչպես է գործում հոգեւոր այս մեծագույն կառույցը:

Օգոստոսի 20-ին հայտնի դարձավ, որ վերոնշյալ շարժման առաջնորդ Բագրատ սրբազան Գալստանյանը տեղափոխվել է «Իզմիրլյան» բժշկական կենտրոն: Կարճ ժամանակ անց իշխանական լրատվամիջոցները, հերթական անգամ, սկսեցին շահարկել հոգեւորականության հետ առնչվող տեղեկատվությունը՝ Հայ Առաքելական եկեղեցում իբրեւ գոյություն ունեցող «սեպերը» վեր հանելու նպատակով:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 21-ին, լրանում էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի 73 ամյակը, եւ իշխանական լրատվամիջոցները սկսեցին գրել, իբրեւ թե Բագրատ սրբազանը տեղափոխվել է հիվանդանոց՝ խուսափելով շնորհավորել կաթողիկոսի ծննդյան տարեդարձը, քանի որ, հակառակ «Սրբազան պայքարին» Վեհափառի աջակցությանը, Տավուշի թեմի առաջնորդի եւ Կաթողիկոսի միջեւ հարաբերությունները լարված են:

«Ամբիցիոզ Բագրատ Գալստանյանը աչք ունի նաեւ կաթողիկոսի աթոռի վրա եւ դրա մասին քաջ հայտնի է Գարեգին Բ-ին», - գրված էր լրատվամիջոցներից մեկի հրապարակման մեջ:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ն իր աղբյուրներից տեղեկացել էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկուշաբթի օրն այցի է գնացել «Իզմիրլյան» ԲԿ՝ տեսակցելու Բագրատ սրբազանին, իսկ արդեն օգոստոսի 21-ին Բագրատ սրբազանն ինքն է զանգահարել Կաթողիկոսին եւ շնորհավորել տարեդարձի առթիվ:

Տեղեկությունը մեզ հետ զրույցում հաստատեց նաեւ Սրբազանը:

Իշխանականներն իրենց հերթին չեն էլ «հիշել», որ օգոստոսի 21-ը Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան օրն էր: Անգամ որեւէ պաշտոնական հաղորդագրություն չտարածվեց՝գոնե ֆորմալ կերպով կարգը պահելու համար:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԵՐԺՈՒՄ

Գորիսի ավագանին արտահերթ նիստում քննարկել եւ մերժել է պրոբացիայի ծառայության գրությունը, որով պետք է դադարեցվեին համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի լիազորությունները:

Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմնի պետ Անդրեյ Գրիգորյանը օգոստոսի 16-ին Գորիս համայնքի ավագանուն է ուղարկել Առուշանյանի վերաբերյալ նույն մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի մարտի 28-ին կայացրած դատավճիռը՝ դրա կատարումն ապահովելու նպատակով:

Առուշ Առուշանյանը դեռ 2022-ի մարտի 28-ին դատարանի վճռով մի դրվագով մեղավոր էր ճանաչվել եւ դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի 6 ամիս ժամկետով, բացի այդ Առուշանյանի նկատմամբ որպես պատիժ կիրառվել էր տուգանքը եւ 5 տարի ժամկետով ՏԻՄ ղեկավարի պաշտոն զբաղեցնելու սահմանափակումը:

Վճիռը բողոքարկվել է վերադաս ատյաններում, սակայն անարդյունք, իսկ այս տարվա հուլիսի 24-ին այն մտել է ուժի մեջ:

Արդարադատության նախարարության մամուլի քարտուղար Նորայր Շողիկյանը լրատվամիջոցներին փոխանցել է, որ Առուշանյանը հրավիրվել է նախարարության պրոբացիայի ծառայություն, վերցվել հաշվառման, նրան ներկայացրել են դատական ակտ, ըստ որի՝նա տուգանվել է 700 հազար դրամով, պետք է անցնի 1.5 տարի փորձաշրջան, ինչպես նաեւ 5 տարի չի կարող զբաղեցնել համայնքային պաշտոններ:

Ավագանին, սակայն, արտահերթ նիստում արձանագրել է, որ Առուշանյանի պաշտոնավարումը դադարեցնելու լիազորություն չունի:

ՀՐԵՏԱԿՈՇՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Փոխհրաձգությունը Լիբանանի հարավային սահմանին չորեքշաբթի հասել է աննախադեպ մակարդակի, Իսրայելն ընդլայնել է իր թիրախների ցուցակը՝դրանում ներառելով պաղեստինցի պաշտոնյաներին, սպանելով ՖԱԹՀ պաղեստինյան շարժման բարձրաստիճան ղեկավարին:

Լիբանանյան «Հըզբալլահ» շարժումն իր հերթին հայտնել է, որ կառավարվող հրթիռ է արձակել իսրայելական տանկի դեմ Աբասիա քաղաքում:

Արաբական ԶԼՄ-ն նշել է, որ սա երկրորդ ուղիղ առճակատումն է իսրայելական բանակի եւ «Հըզբալլահի» միջեւ մարտական գործողություններն սկսվելու պահից:

Նախորդ 10 ամիսներին գործողությունները սահմանափակվել են հրթիռային եւ հրետանային գնդակոծություններով, օդային հարձակումներով: Երեքշաբթի երեկոյան Բեքաաում իսրայելական անօդաչուն կառավարող հրթիռ է արձակել մեքենայի վրա՝սպանելով լիբանանցի վարորդին:

Իսրայելի կողմից Վազանի քաղաքի հրետակոծութան հետեւանքով զոհվել է մի երիտասարդ սիրիացի: Իսրայելական ինքնաթիռները հարվածել են երկհարկանի տանը Դայրա սահմանամերձ քաղաքում, ինչի հետեւանքով զոհվել է երեք մարդ: Մոտոցիկլավարը հրաշքով է փրկվել իսրայելական անօդաչուի արձակած հրթիռից Շեհաբիա քաղաքում:

Իսրայելական անօդաչուն ցերեկը հարվածել է մեքենային Սիդոն քաղաքում, սպանվել է ՖԱԹՀ-ի պաշտոնաթող սպա Հալիլ Ալ-Մակդան: Նա ՖԱԹՀ-ի լիբանանյան զինված թեւի՝ «Ալ-Աքսայի նահատակների բրիգադների» ղեկավար Մունիր Ալ-Մակդայի եղբայրն էր:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԻԺԸ ՓՈԽԱՐԻՆՎԵԼ Է ԱԶԱՏԱԶՐԿՄԱՄԲ

Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 28.03.2022 թվականի թիվ ՍԴ/0043/01/21 դատավճռով դատապարտվել է /2003 թ. ընդունված/ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով եւ որպես պատիժ է նշանակվել տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ 5 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով եւ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 700-ապատիկի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 6-րդ կետերով եւ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 տարի 3 ամիս ժամկետով:

Վերոնշյալը հայտնում են արդարադատության նախարարությունից:

Հանցանքների համակցությամբ՝ նշանակված պատիժները լրիվ գումարվել են եւ Առուշ Առուշանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 6 ամիս 18 օր ժամկետով, տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 700-ապատիկի չափով եւ տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ 5 տարի ժամկետով:

Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով Առուշ Առուշանյանի նկատմամբ ազատազրկման ձեւով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել եւ սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի 6 ամիս ժամկետով:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր դատարանի 28.03.2022 թ. թիվ ՍԴ/0043/01/21 դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 24.07.2024 թ., որը պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմին է մուտքագրվել 14.08.2024 թ.:

Շահառու Առուշ Առուշանյանին 15.08.2024 թ. ուղարկվել է ծանուցագիր՝ Ծառայության Սյունիքի մարզային մարմին ներկայանալու վերաբերյալ:

Առուշ Առուշանյանը 19.08.2024թ. ներկայացել է պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմին եւ սահմանված կարգով հաշվառվել, նրան գրավոր պարզաբանվել են իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաեւ չկատարելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

Առուշ Առուշանյանը 19.08.2024թ. Ծառայության Սյունիքի մարզային մարմին է ներկայացրել թիվ ՍԴ/0043/01/21 դատական ակտով նշանակված 700.000 ՀՀ դրամ տուգանքի վճարումը փաստող անդորրագիրը, որով փաստացի ի կատար է ածվել վերջինիս տուգանք պատժատեսակը:

Շահառու Առուշ Առուշանյանը, դատական ակտով զրկված լինելով որպես պատիժ նշանակված տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից, եւ տեղեկացված լինելով պատժի պահանջը չկատարելու դեպքում՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկվելու մասին, շարունակում է զբաղեցնել Սյունիքի մարզի Գորիս համայնքի համայնքապետի պաշտոնը:

Ծառայության Սյունիքի մարզային մարմնում կազմվել է պատժից խուսափելու մասին արձանագրություն (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ «դատապարտյալի կողմից որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարումից խուսափելու դեպքում Պրոբացիայի ծառայությունն այդ մասին կազմում է արձանագրություն եւ միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ») եւ միջնորդություն է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Առուշ Առուշանյանի նկատմամբ դատավճռով նշանակված պատիժը՝ տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը ազատազրկմամբ փոխարինելու, ինչպես նաեւ ազատազրկման ձեւով պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշումը վերացնելու եւ պատիժը կրելու ուղարկելու վերաբերյալ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՃԱՌՎԵԼ Է ՇՈՒՐՋ 2,5 ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներից մեկի նախկին ղեկավար Լ. Ա.-ի աղօրինի գործողություններ, այդ թվում՝ յուրացման եղանակով հափշտակություն կատարելու հետեւանքով համայնքապետարանին պատճառվել է ընդհանուր շուրջ 2,5 միլիոն ՀՀ դրամի վնաս:

Մասնավորապես՝ պարզվել է, որ վարձավճարի դիմաց բնակիչներին ոռոգման ջուր տրամադրելու նպատակով Լ. Ա.-ն իր միջոցների հաշվին կառուցել է խորքային հոր, որի էլեկտրաէներգիայի բաժանորդը 2009 թվականից հանդիսացել է համայնքապետարանը: Լ. Ա.-ն, պարտավորություն ունենալով յուրաքանչյուր ոռոգման սեզոնի ընթացքում խորքային հորի համար օգտագործված էլեկտրաէներգիայի գումարը վճարել բնակիչներից հավաքագրված միջոցներից, համայնքի ղեկավարի վստահությունը չարաշահելու եղանակով՝ չի կատարել օգտագործված էլեկտրաէներգիայի դիմաց 1.422.658 ՀՀ դրամ գումարը պատշաճ վճարելու իր պարտավորությունները: Այսինքն՝ 2010-2016 թվականներին իր փոխարեն հիշյալ վճարումները կատարվել են համայնքապետարանի միջոցներից, որի հետեւանքով գույքի այլ տիրապետողին՝ համայնքապետարանին, պատճառվել է խոշոր չափերով՝ 1.422.658 ՀՀ դրամի վնաս:

Բացի այդ, նախաքննությամբ հիմնավորվել է, որ 2018 թվականից 2021 թվականն ընկած ժամանակահատվածում Լ. Ա.- ն, կրկին զբաղեցնելով նույն համայնքի ղեկավարի պաշտոնը, անտեսել է օրենքով սահմանված՝ համայնքի բյուջեի միջոցները տնօրինելու եւ դրանց նպատակային օգտագործումն ապահովելու օրենսդրական պահանջը եւ 2019-2021 թվականների ընթացքում հիշյալ խորքային հորի համար օգտագործած ընդհանուր 1.711.805 դրամի էլեկտրաէներգիայի գումարից իր կողմից վճարել է միայն 674.000 ՀՀ դրամը: Մնացած՝ 1.037.805 ՀՀ դրամը հաշվարկվել եւ վճարվել է վերոհիշյալ ժամանակահատվածում համայնքապետարանին հատկացված եւ Լ. Ա.-ին վստահված միջոցներից: Այդ կերպ վերջինս, օգտագործելով պաշտոնեական դիրքը, յուրացման եղանակով հափշտակել է նշված գումարը:

Համայնքապետարանին խոշոր չափերի վնաս պատճառելու եւ յուրացման եղանակով խոշոր չափերով հափշտակություն կատարելու համար Լ. Ա.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասով եւ 179- րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով:

ՔՐԵԱԿԱՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերով քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում հիմնավորվել է մաքսանենգությամբ Հայաստան տեղափոխված 53 կգ. տարբեր տեսակի թմրամիջոցներից առանձնապես խոշոր չափերով «Մարիոխուանա» տեսակի թմրամիջոցի՝ իրացման նպատակով ապօրինի շրջանառության փորձի դրվագը:

Քննիչների եւ ԱԱԾ աշխատակիցների համատեղ իրականացված համակարգված միջոցառումների արդյունքում պարզվել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության մի շարք մանրամասներ, այդ թվում՝ թմրամիջոցի ձեռք բերման աղբյուրը, հանցավոր շղթայում ներգրավված անձանցից եւս երկուսի ինքնությունը, որոնցից մեկը ԻԻՀ քաղաքացի է, մյուսը՝ Երեւան քաղաքի 23-ամյա բնակիչ:

Քննությամբ հիմնավորվել է, որ ԻԻՀ քաղաքացին, շահադիտական դրդումներով իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դիտավորությամբ, նախնական համաձայնություն է ձեռք բերել ի թիվս այլոց՝ նաեւ տելեգրամյան էջի օգտատիրոջ եւ քննությամբ դեռեւս չպարզված այլ անձանց հետ: Իր հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով նա ապահովել է ՀՀ պետական սահմանով մաքսանենգությամբ առանձնապես խոշոր չափերով «Մարիխուանա» եւ այլ տեսակի թմրամիջոցների ապօրինի տեղափոխումը ՀՀ տարածք:

Այնուհետեւ ԻԻՀ քաղաքացին Հայաստանում բնակվող իր ծանոթին հայտնել է իր հանցավոր մտադրության մասին՝ շահագրգռելով վերջինիս:

Ավելի քան 1 կգ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը նրա հանձնարարությամբ հիշյալ ծանոթը տեղադրել է թաքստոցում եւ տեղադրման վայրի լուսանկարները ուղարկել ԻԻՀ քաղաքացուն:

Վերջինս իր հերթին ստացված լուսանկարներն ուղարկել է խմբի կազմում ընգրկված անձանց, այդ թվում՝ տելեգրամյան մի էջի օգտատիրոջ, ով իր հերթին դրանք ուղարկել է Երեւան քաղաքի 23-ամյա բնակչին: Վերջինս սակայն ձերբակալվել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Երեւան քաղաքի 23-ամյա բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Որպես խափանման միջոց՝ վերջինիս նկատմամբ կիրառվել է կալանավորումը:

23-ամյա երիտասարդի մասով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 21-ից 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 88 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՏԹԱՐ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝ մարզի պետական առողջապահական հիմնարկներից քանի՞սն ունեն վերանորոգման կամ հիմնանորոգման կարիք: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության 21 բուժհիմնարկներից (ինչպես նաեւ նրանց կազմում գործող 39 բուժականկաբարձական կետերից) վերանորոգման, հիմնանորոգման եւ նորի կառուցման կարիք ունեն հետեւյալ բուժհիմնարկները եւ նրանց կազմում գործող բուժակա-անկաբարձական կետերը.

1) Հաղարծինի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Ներքին Գոշի ԲՄԿ՝ նորի կառուցման կամ նոր վագոն-տնակի կարիք:

2) Գետահովիտի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի՝ նոր շենքի կառուցման կարիք:

3) Իջեւանի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Լուսաձորի ԲՄԿ՝ հիմնանորոգման կարիք:

4) Այգեհովիտի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Կայանավանի ԲՄԿ՝ հիմնանորոգման կարիք:

5) Խաշթառակի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Լուսահովիտի ԲՄԿ՝ հիմնանորոգման կարիք:

6) Սեւքարի ԳԲԱ ՊՈԱԿ-ի Աճարկուտի եւ Սարիգյուղի ԲՄԿ-ներ՝ հիմնանորոգման կարիք

7) Նավուրի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Իծաքարի ԲՄԿ՝ հիմնանորոգման կարիք:

8) Նոյեմբերյանի ԲԿ ՓԲԸ-ի մանկական եւ ինֆեկցիոն բաժանմունքների շենքը կառուցում եւ Ջուջեւանի ԲՄԿ՝ հիմնանորոգման կարիք:

9) Այրումի ԳԲԱ ՊՈԱԿ՝ նոր շենքի կառուցման կարիք:

10) Ոսկեվանի ԳԲԱ ՊՈԱԿ-ի Ոսկեպարի ԲՄԿ՝ հիմնանորոգման կարիք:

11) Կողբի ԳԲԱ ՀՈԱԿ՝ նոր շենքի կառուցման կարիք:

12) Բագրատաշենի ԳԲԱ ՊՈԱԿ-ի Դեբեդավանի ԲՄԿ՝ հիմնանորոգման կարիք:

13) Ջորականի ԳԲԱ ՊՈԱԿ-ի Հաղթանակի ԲՄԿ՝ հիմնանորոգման կարիք»:

Մարզպետարանից տեղեկացել ենք, որ Տավուշի մարզպետարանի պատվիրակությամբ ներկայումս մարզում նորոգվող, կառուցվող առողջապահական կազմակերպություններ չկան: Պետբյուջեի փողերը փոխանակ ուղղվեն բուժհիմնարկների շենքերի նորոգմանը, հատկացվում են մարզպետարանի պաշտոնյաների պարգեւատրման նպատակով:

2024 թվականի հուլիսի 15-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 33 միլիոն 484 հազար 235 դրամ պարգեւավճար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀ» ՃԱՄԲԱՐ

ԽԹԱՆ՝ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանից եւ Արցախից ավելի քան 100 երեխաներ Սեւանում չորս օր շարունակ մասնակցում են «Համերաշխության աշխարհ» խորագրով ճամբարին: Այն իրականացնում է Հաղորդակցության զարգացման միջազգային ինստիտուտ հումանիտար հիմնադրամը՝ Հաղորդակցության զարգացման ազգային գիտահետազոտական ինստիտուտի (НИИРК) աջակցությամբ:

Մանկական ճամբարի բացմանը մասնակցել է ՌԴ Հաղորդակցության զարգացման ազգային գիտահետազոտական ինստիտուտի (НИИРК) միջազգային գիտական փոխանակման ծրագրերի ղեկավար Սերգեյ Բազավլուկը: НИИРК-ի աջակցության շնորհիվ Հայաստանից եւ Արցախից 100 երեխաներ հնարավորություն ունեցան հանգստանալ Սեւանա լճի գեղատեսիլ ափին, մասնակցել առաջնորդական որակների եւ հաղորդակցման հմտությունների զարգացմանն ուղղված ստեղծագործական եւ սպորտային միջոցառումների, ինչպես նաեւ բարելավեցին ռուսաց լեզվի գիտելիքները:

«Ճամբարը կոչվում է «Համերաշխության աշխարհ», քանի որ համերաշխության վրա հիմնված աշխարհը միշտ կլինի արդար, բարի եւ հրաշալի: Ճամբարային ծրագիրն այնպես է նախատեսված, որ այստեղ մասնակիցները զբաղվում են սպորտով, զարգացնում են ստեղծագործական ունակությունները: Բայց ամենակարեւորն այն է, որ մասնակիցներից յուրաքանչյուրը գտնի իր ընկերոջն այստեղ», -իր ողջույնի խոսքում ասել է Բազավլյուկը:

Հայաստանում ՌԴ դեսպանատան մամուլի կցորդ Դմիտրի Ռիկովը շնորհակալություն է հայտնել ծրագրի կազմակերպիչներին: «Այն կազմակերպությունները, որոնք ուշադրություն են դարձնում երիտասարդների հետ աշխատելուն եւ ռուսաց լեզվի հանրահռչակմանը, շատ կարեւոր, պատասխանատու աշխատանք են կատարում: Ի վերջո, ռուսաց լեզուն, ինչպես ցանկացած օտար լեզու, զարգացնում է մեր մտածողությունը, օգնում է մեզ հասկանալ ուրիշներին, ավելի լավ հասկանալ աշխարհը: Բացի այդ, ռուսաց լեզուն, որպես ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից մեկը, լուրջ առավելություններ է տալիս նրանց, ովքեր տիրապետում են լեզվին: Հին հույն փիլիսոփա Դիոգենեսն ասում էր, որ ցանկացած պետության հիմքը երիտասարդության կրթությունն է, եւ, դատելով այն ամենից, ինչ մենք այսօր տեսել ենք եւ նորից կտեսնենք, ապա Հայաստանին իսկապես պայծառ ու լուսավոր ապագա է սպասվում»,-նշել է նա:

Ճամբարի բացման արարողությանը մասնակցել են նաեւ «Տուր ուժ. Տուր հույս. Տուր լույս», «Նոր գույներ» եւ «Դիզակ արտ» երիտասարդական մշակութային կենտրոնների մասնակիցները:

Ծրագրի վերաբերյալ իրենց գոհունակությունն են հայտնել Սեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Արմինե Ղուկասյանը եւ Արենիի քաղաքապետարանի ղեկավարի առաջին տեղակալ Միեր Ասատրյանը:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ԿԱՊՈՒՅՏ ՀԱՋԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը փաստեր է ներկայացրել կապույտ հազի վերաբերյալ:

«Կապույտ հազը բարձր վարակելիությամբ օդակաթիլային վարակ է: 1 հիվանդը կարող է վարակել 12-17 անձի: Կապույտ հազին բնորոշ է 3-ից 5 տարի պարբերականությամբ աշխուժացումը:.

Կապույտ հազով հիմնականում հիվանդանում են երեխաները: Առավել ծանր է ընթանում մինչեւ 6 ամսական, հատկապես՝ մինչեւ 2 ամսական երեխաների շրջանում:

Կապույտ հազի ախտանշաններն են՝ ջերմություն, չոր, տանջող, նոպայաձեւ սպաստիկ հազ: Հիվանդությանը բնորոշ բարդություններն են՝ թոքաբորբ, բրոնխիտ, էնցեֆալիտ (ուղեղի ախտահարում), որոնք կարող են երեխայի հաշմանդամության պատճառ դառնալ:

Կանխարգելում՝

ձեռքերի հաճախակի լվացում, ախտանշանների դեպքում՝ շփումների սահմանափակում, Կապույտ հազի կանխարգելման միակ անվտանգ եւ արդյունավետ միջոցը պատվաստումն է՝ ըստ ժամանակացույցի: Պատվաստումները սկսվում են 6 շաբաթականից: Խրախուսելի է նաեւ հղիների պատվաստումը՝27-36 շաբաթականում, քանի որ պատվաստվելով՝ հղին պաշտպանում է նորածնին՝ մինչեւ պատվաստման տարիքը:

Բուժում՝

Բժշկի նշանակմամբ հակաբիոտիկների կիրառում, որոնք առավել արդյունավետ են հիվանդության վաղ փուլում, պատվաստում, քանի որ կապույտ հազի լավագույն պաշտպանությունը կանխարգելումն է»,- հայտնում են ԱՆ-ից:

«ՀՈՎԻՎՆԵՐԻ ԽՆԴԻՐ ԿԱ». ՓԱՇԻՆՅԱՆ

Կառավարությունը օգոստոսի 22-ի նիստում հաստատեց անասնաբուծության խթանման ծրագիրը:

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը նշեց, որ ծրագրի շրջանակներում կներկրվի 10.000 գլուխ ոչխար ու այծ:

«Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակներում կովերի արհեստական սերմնավորման գործընթացի միջոցով կբարելավվի տավարի տոհմային հատկանիշները եւ կբարձրացվի անասունի մթերատվությունը: Իսկ «Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագրով» մարզերը կհամալրվեն 10.000 մեղվաընտանիքներով»:

Անդրադառնալով ոլորտին՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ ոչխարաբուծությունն ամենաեկամտաբեր ոլորտներից է. «Բայց մենք այդպես էլ չենք կարողանում քաղաքացիներին քաջալերել, որպեսզի մեծ քանակով ոչխարաբուծությունը զարգանա, փոխարենը, մեր տվյալները ցույց են տալիս, որ շատ է գառների ներմուծումը, իսկ որոշ ժամանակ անց՝ արտահանումը»:

Կառավարության ղեկավարի խոսքով՝ գառների արտահանումն ամենաշահութաբեր ոլորտներից մեկն է:

«Եվ երբ ուզում էի հասկանալ՝ ինչն է պատճառը, որ գլխաքանակ չի ավելանում, լսեցի ինձ համար թերեւս ամենաանսպասելի պատասխանը՝ հովիվների պրոբլեմ կա: Չեն կարող հովիվ գտնել, որովհետեւ ոչխարն այն տեսակն է, որին արոտավայրերում պետք է հովիվները արածեցնեն: Մենք այդքան հետազոտում ենք, բայց, միեւնույն է, պատասխանները պետք է կյանքից վերցնենք, որ պրոբլեմները հասկանանք, որովհետեւ մեր ոչ մի փաստաթղթում ես նման բան չեմ կարդացել եւ համոզված եմ՝ չէի էլ կարդա, բայց սա պրոբլեմ է»,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

● *Անցած օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար. 31 մարդ ստացել է ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԱՅԴԵՔՍ 2025»-Ի ՀԱՅՑԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հայտարարում է 2025 թվականի փետրվարի 17-21-ն Արաբական Միացյալ Էմիրությունների մայրաքաղաք Աբու Դաբիում կայանալիք «ԱՅԴԵՔՍ 2025» (IDEX 2025) պաշտպանական տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսին մասնակցության հայտերի ընդունման մեկնարկի մասին: Միջոցառումն անցկացվում է երկու տարին մեկ անգամ, բաղկացած է համաժողովից եւ ցուցահանդեսից, որոնց նպատակն է ստեղծել հարթակ՝ քննարկելու ոլորտի վերջին զարգացումները, միտումները եւ նորարարական լուծումները, որոնք կուղեկցվեն ոլորտի լավագույն փորձի եւ ձեռքբերումների ցուցադրմամբ:

Հաշվի առնելով միջոցառման մասշտաբայնությունն ու ձեւաչափը՝ նախարարությունը նախատեսում է միջոցառմանը ներկայանալ հայկական ոլորտային ընկերությունների հետ միասնական տաղավարով՝ ներկայացնելով պաշտպանական եւ սպառազինության ոլորտներում կազմակերպությունների կողմից առաջարկվող լուծումները:

Նախարարությունը հոգալու է ցուցահանդեսային տարածքի վարձակալության, կառուցապատման եւ ցուցահանդեսի մուտքի ծախսերը:

Մնացած ծախսերը (ավիատոմսեր, կեցություն) հոգալու են ընտրված ընկերությունները:

«ԿՈՆՅԱԿԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀՀ-Ն ԽՆԴԻՐ ՉՈՒՆԻ»

«Երբ կլինի պաշտոնական արձագանք մենք դա կքննարկենք, կպատասխանենք: Մենք այս պահին եւ արտահանման եւ իրացման հետ կապված որեւէ խնդիր չունենք, եւ որեւէ ահազանգ չենք ստացել», - լրագրողների հետ զրույցում հայտնել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը՝ անդրադառնալով այն հարցին, թե Ռուսաստանի Դաշնության գործընկերոջը հարցրել է՝ հայկական կոնյակը խնդիր ունի, թե ոչ:

«Եթե այս պահին բիզնեսը նման խնդիր չի բարձրաձայնում, մենք էլ չենք տեսնում այն»,-հավելել է նա:

Հիշեցնենք, որ «Անտիկոնտրաֆակտ» ասոցիացիայի եւ Ռուսաստանի կոնյակ, սպիրտ ու ալկոհոլային խմիչք արտադրողների միության համատեղ հետազոտության արդյունքում հայտարարվել էր, որ Ռուսաստանի Դաշնությունում վաճառվող հայկական կոնյակի գրեթե 90%-ն անվտանգ չէ, իսկ արտադրանքի գրեթե 50%-ը պարունակում է ոչ ալկոհոլային սպիրտ, որը չպետք է լինի կոնյակի մեջ:

Binance

ԿԱՆԽԵԼ Է 2,4 ՄԼՐԴ ԴՈԼԱՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏԸ

Ավելի քան 1,2 միլիոն օգտատեր պաշտպանվել է հնարավոր խարդախություններից:

Binance-ը՝ առեւտրի ծավալով աշխարհի խոշորագույն կրիպտոարժույթների բորսայի գործունեությունն ապահովող առաջատար բլոկչեյն էկոհամակարգը, 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին կանխել է ավելի քան 2,4 միլիարդ ԱՄՆ դոլարի կորուստը, ինչը կարող էր ազդել ավելի քան 1,2 միլիոն օգտատիրոջ վրա: Դա հնարավոր է դարձել ռիսկերի կառավարման համապարփակ միջոցառումների իրականացման շնորհիվ, որոնք արդյունավետ կերպով բացահայտում եւ նշում են հարթակում կասկածելի գործարքները:

Ավելի հաճախ կասկածելի գործարքներն արձանագրվել են կրիպտոարժույթի դուրսբերման փուլում:

Այս տարի ավելի քան 1,1 միլիարդ դոլար կամ 2,4 միլիարդ դոլար՝ հնարավոր ընդհանուր կորուստների մոտ 45%-ը, վերագրվել է կրիպտո խարդախության կասկածանքին: Binance-ն օգտագործում է ներքին ռիսկերի կառավարման համակարգ, որն ապահովում է 24/7 մոնիթորինգ իրական ժամանակում արհեստական ինտելեկտի եւ մեխանիկական ստուգման միջոցով: Այս համակարգը թույլ է տալիս բացահայտել կասկածելի գործարքներն ու արագ արձագանքել՝ պաշտպանելու դրանց օգտատերերին:

Ռիսկերի գնահատման մեխանիզմը ներառում է տարբեր բիզնես ոլորտներ, ներառյալ P2P առեւտուրը, վճարումները եւ միջոցների դուրսբերումը: Ռիսկերի նվազեցումն ապահովելու համար համակարգում ինտեգրված է հսկողության մի քանի մակարդակ, ինչն օգնում է ռիսկի ընդհանուր մակարդակը պահպանել թույլատրելի սահմաններում:

Բինանսի տեխնոլոգիական պատասխանատու Ռոհիթ Վադն ասել է, որ օգտատերերի վրա կենտրոնանալն առանցքային առաջնահերթություն է: Մշտապես ուշադրության կենտրոնում են գտնվում արդյունաբերության առաջատար տեխնոլոգիական գործիքների եւ գործընթացների ստեղծումն ու պահպանումը, ինչը թույլ է տալիս շուրջօրյա պաշտպանել օգտատերերին եւ նրանց ակտիվները:

«Ընդամենը 7 ամսում ավելի քան 2,6 միլիարդ ԱՄՆ դոլարի հնարավոր կորուստներից խուսափելը տարիների ընթացքում մեր քրտնաջան աշխատանքի եւ նվիրվածության վկայությունն է: Մենք գոհ ենք, որ մեր ջանքերն օգնում են հաճախորդների համար ստեղծել ավելի անվտանգ էկոհամակարգ, եւ, որպես ոլորտի առաջատար, մենք կշարունակենք կրել մեր պատասխանատվությունը՝ հնարավոր սպառնալիքներին դիմակայելու համար պարբերաբար կատարելագործելով մեր համակարգերն ու հնարավորությունները»,- ասել է նա: Բացի մոնիթորինգից եւ հայտնաբերումից, Binance-ն օգտագործում է նաեւ գործիքների եւ միջոցների լայն շրջանակ օգտատերերին կրիպտո խարդախությունից պաշտպանելու համար:

Ընկերության ռիսկերի վերահսկվում են 8 մակարդակում՝ հաշվի առնելով ռիսկի ծանրությունը եւ ապահովելով հավասարակշռություն օգտվողների տեղեկացվածության եւ անվտանգության առումով: Այս միջոցները ներառում են կարգավորվող թռուցիկ ծանուցումներ, հետաձգման գործառույթ, նախազգուշացնող ազդանշաններ: Բացի դրանից, Binance-ն առաջարկում է բովանդակային մշակելու տարբեր ալիքներ՝ ամբողջությամբ ավտոմատացվածից մինչեւ մեխանիկական գործընթացներ բոլոր այն դեպքերում, երբ օգտատերն իր խնդիրները լուծելիս կարող է գտնվել պոտենցիալ վտանգի գոտում: Binance-ը շարունակում է անել հնարավոր ամեն ինչ՝ պաշտպանելու օգտատերերի ակտիվները, միեւնույն ժամանակ ընդգծելով, թե որքան կարեւոր է օգտատերերի զգոնությունը:

«Մենք նաեւ խրախուսում ենք մեր օգտատերերին մնալ զգոն եւ պատասխանատվություն ստանձնել իրենց անվտանգության համար: Թեեւ մեր թիմը համապարփակ միջոցառումներ է իրականացրել ձեր միջոցները պաշտպանելու համար, ի վերջո, օգտվողներն իրենք են խնդում իրենց ակտիվների պաշտպանության գործում ամենակարեւոր դերը: Եղեք տեղեկացված, օգտագործեք ուժեղ անվտանգության պրակտիկա եւ զգոն եղեք հնարավոր խարդախությունների նկատմամբ»,- նշում է Ռ.Վադը:

Տեղեկացնենք, որ այս տարվա հուլիսի 31-ի դրությամբ Binance-ը վերադարձրել է ավելի քան 73 միլիոն դոլար, որ ուղարկվել է սխալմամբ կամ կորցրել են օգտատերերը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

«ՀԻՆ» ՈՒ «ՆՈՐ» ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ՏՈՒՓԵՐ

Հայաստանում վերջին մի քանի ամիսների ընթացքում հնարավոր է նկատել փոփոխություններ ծխախոտային արտադրատեսակների տուփերի արտաքին տեսքի մեջ: Սպառողներն արդեն նկատել են, որ նույն արտադրողի նույն ծխախոտային արտադրատեսակը հաճախ տարբեր տեսք կարող է ունենալ:

Պատճառն այն է, որ 2024թ. հունվարի 1-ից ի վեր Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ են մտել ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի դրույթները: Դրանց համաձայն՝ այն ծխախոտային արտադրատեսակների տուփերը, որոնք Հայաստանում են ներմուծվել կամ տեղում արտադրվել են 2024թ. հունվարի 1-ից հետո, պետք է ունենան օգտագործման վնասակարության մասին տեղեկացնող ու նախազգուշացնող նկարներ: Այսինքն, եթե վաճառքի կետերում ու խանութներում նկատում եք այս նախազգուշացնող նկարները պարունակող ծխախոտային արտադրատեսակներ, դա նշանակում է, որ դրանք արտադրվել են 2024թ. հունվարի 1-ից հետո, եւ, հետեւաբար, ավելի թարմ են:

Ընդ որում, որոշ ժամանակ շուկայում առկա կլինեն եւ՛ օգտագործման վնասակարության մասին նկարներով եւ՛ առանց այդ նկարների տուփեր, մինչեւ լիովին կսպառվեն այն ծխախոտային արտադրատեսակները, որոնք ներմուծվել կամ արտադրվել են մինչեւ 2024թ. հունվարի 1-ը, եւ որոնց նկատմամբ այս տեխնիկական կանոնակարգը չի կիրառվել:

Միաժամանակ՝ հարկ է նշել, որ հիմնական փոփոխությունը կապված է նախազգուշացնող նկարների հետ. դրանք այժմ պետք է զբաղեցնեն տուփի դիմացի եւ հակառակ կողմի մակերեսի վերեւի կեսը: Համաձայն կանոնակարգի դրույթների՝ դիմային մասում նախազգուշացնող տեքստերը ներկայացված են հայերենով, իսկ հակառակ կողմում՝ ռուսերենով:

Հետաքրքիր է նաեւ այն փաստը, որ տուփերի վրա այլեւս բացակայելու են խեժի եւ նիկոտինի պարունակության տեղեկությունները, քանի որ համաձայն ԵԱՏՄ օրենսդրության՝ դրանք չպետք է նշված լինեն տուփի վրա:

●*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՄՌԱՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ամռանը Հայաստանի ազգային գրադարանում իրականացվել է շուրջ 40 միջոցառում, որոնք ունեցել են ավելի քան 850 մասնակից: Այս ամիսներին գրանցվել է 547 նոր ընթերցող, իսկ գրադարանի այցելուների թիվը կազմել է 24.324:

Ամառն առանձնացել է նաեւ մի շարք իրադարձություններով, այդ թվում՝ Հայաստանի ազգային գրադարանի հիմնադրման 105-ամյակի առիթով թամանյանական մասնաշենքի երկրորդ հարկում բացվել է Հայաստանի ազգային գրադարանի թանգարանային ցուցասրահը: Այստեղ ներկայացված են գրադարանի հիմնադիր փաստաթղթերը, նամակներ, գրություններ, Ալ. Թամանյանի շենքի մեծադիր նախագիծը, արխիվային լուսանկարներ եւ Հովհաննես Նաղաշյանի դրվագազարդ կահույքի նմուշներ: Տեղի է ունեցել «Հայ բանասիրության հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողովը: Լիագումար նիստում Ազգային գրադարանի գիտական փոխտնօրեն Հայկանուշ Ղազարյանը ներկայացրել է «Ազգային գրադարանի շտեմարանները. աջակցություն հայագիտությանը» զեկուցումը: Օգտակար եւ ուշագրավ զեկուցումներ են ներկայացրել Սեւան Տեիրմենջյանը (Ստամբուլ, Թուրքիա), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը եւ ուրիշներ:

Ամռանը գրադարանում գործել են մի քանի գրքային ցուցահանդեսներ (Էռնեստ Հեմինգուեյ 125, Լեւոն Շանթ 155):

Առանձնակի ուշադրության է արժանի արեւմտահայ բանաստեղծ Զահրատի 100-ամյակին նվիրված ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են գրողի առանձին գրքով հրատարակությունները, տարբեր լեզուներով թարգմանություններ, Զահրատի ձեռագրերի կրկնօրինակներ, լուսանկարներ, մամուլի անդրադարձներ: Զահրատի ստեղծագործությանը նվիրված ուշագրավ հանրային դասախոսություն է ներկայացրել գրականագետ Երվանդ Տեր-Խաչատրյանը:

Շարունակվել են կապերը մարզային եւ համայնքային գրադարանների հետ: Ճանաչողական այցով գրադարան են այցելել Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքային գրադարանի, Վանաձորի գրադարանների կենտրոնացված համակարգի եւ «Վեդի համայնքի գրադարան» ՀՈԱԿ-ի գրադարանավարները: Իր հերթին Հայաստանի ազգային գրադարանի համագործակցության եւ գրքափոխանակության բաժնի մի խումբ աշխատակիցներ այցելել են Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզային գրադարաններ, նվիրել գրականություն, ինչպես նաեւ գործնական հանդիպումներ ունեցել տեղի համայնքային գրադարանավարների հետ:

Գրադարանի աշխատակիցների համար «Կիբեր-թրաֆիքինգ եւ կիբերանվտանգություն» թեմայով դասընթաց է տեղի ունեցել, որը վարել են Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետ Վիկտորիա Ավակովան եւ SS անվտանգության մասնագետ, մեդիա փորձագետ Սամվել Մարտիրոսյանը:

Գրադարանում անցկացվել է նաեւ դասախոսություն «ORCID-գիտնականների միասնական միջազգային ռեգիստր» թեմայով, որը վարել է ՀԱԳ Գրականության հանրահռչակման բաժնի վարիչ Արմինե Վարդանյանը:

Գրադարանը շարունակել է «Ֆիլմադարան» հասարակական կազմակերպության հետ ֆրանսիական ֆիլմերի ամենամյա ցուցադրություն-քննարկումների շարքը: Ամռվա ամիսներին չորս ֆիլմ է ցուցադրվել, այդ թվում՝ «Արհամարհանք» (1963 թ., ռեժ.՝ Ժան-Լյուկ Գոդար.), «Կլեոն 5-ից 7-ը» (1962 թ., ռեժ.՝ Անյես Վարդա), , «Հիրոսիմա, իմ սեր» (1959 թ., ռեժ.՝ Ալեն Ռենե), «Ժյուլ եւ Ջիմ» (1962 թ., ռեժ.՝ Ֆրանսուա Տրյուֆո):

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑՔ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներն այցելել են Սյունիքի մարզ՝ հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման ընթացքն ու խնդիրները տեղում քննարկելու նպատակով:

Վաղատին գյուղի Որոտնավանք վանական համալիրում (պետ. ցուցիչ՝ 8.89.5, հանրապետական նշանակության) Սյունյաց թեմի առաջնորդի եւ Գորիսի տարածաշրջանի հոգեւոր հովվի հետ քննարկվել են համալիրի վնասված ծածկասալերի, տարածքի բարեկարգման եւ այլ հարցեր:

Որոտան գյուղում գտնվող դեռեւս 5-րդ դարում հիշատակվող Որոտնաբերդում (պետ. ցուցիչ՝ 8.78.1, հանրապետական նշանակության) անդրադարձ է կատարվել հնարավոր պեղումներին, դեպի բերդ մոտեցման ճանապարհի եւ այլ խնդիրներին: Քննարկվել է նաեւ վերջինիս հարակից տարածքում գտնվող Մելիք Թանգու կամրջի (պետ. ցուցիչ՝ 8.78.3, հանրապետական նշանակության) վնասված հատվածների վերականգնման անհրաժեշտությունը:

Աղիտու գյուղի կոթողի (պետ. ցուցիչ՝ 8.11.3.1.6, հանրապետական նշանակության) տարածքում անդրադարձ է կատարվել հուշարձանի բարենպաստ տեսողական ընկալումը խաթարող գազի խողովակների եւ կառույցների հնարավոր հեռացման խնդիրներին եւ տարածքի բարեկարգմանը:

2 ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼ՝ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻՑ

ՀՀ դպրոցականները 2 բրոնզե մեդալ են նվաճել Եվրոպայի Ինֆորմատիկայի պատանեկան 8-րդ օլիմպիադայում, որն օգոստոսի 16-22-ն անցկացվել է Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում: Օլիմպիադային մասնակցել է 26 երկրի 98 աշակերտ:

Օլիմպիադայի անցկացման ձեւաչափը համընկնում էր Ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայի (IOI) ձեւաչափին, որի ժամանակ մասնակիցները 2 մրցութային օրերում կատարում են 3-ական առաջադրանքներ, իսկ յուրաքանչյուր երկիր կարող էր ներկայացնել առավելագույնը 4 մասնակից:

Օլիմպիադային Հայաստանի թիմը ներկայացրել են Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց 9-րդ դասարանի աշակերտներ Տիգրան Մացակյանը ու Վահագն Գյոզալյանը, ինչպես նաեւ Գյումրու Ֆոտոն վարժարանի 9-րդ դասարանի աշակերտ Արման Կիրակոսյանը եւ Քվանտ վարժարանի 8-րդ դասարանի աշակերտ Արեն Գրիգորյանը: Բրոնզե մեդալներ են նվաճել Տիգրան Մացակյանը եւ Արման Կիրակոսյանը, իսկ Վահագն Գյոզալյանն արժանացել է գովասանագրի:

Թիմը ղեկավարել են ԵՊՀ ուսանողներ Սամվել Անդրեասյանը եւ Սամվել Աբելյանը, իսկ ԵՊՀ դասախոս Արմեն Անդրեասյանն ընդգրկված էր EJOI-ի օլիմպիադայի կոմիտեի կազմում:

Հիշեցնենք, որ 2023 թ.-ին Եվրոպայի ինֆորմատիկայի պատանեկան 7-րդ օլիմպիադան անցկացվել էր Վրաստանի Քութաիսի քաղաքում, որի ժամանակ Հայաստանի թիմը արժանացել էր 1-ական ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալների:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆՈԱ»-Ն ՀԱՂԹԵՑ «ՌՈՒԺՈՄԲԵՐՈԿ»-ԻՆ

Երեւանի «Նոա» ակումբը Կոնֆերենցիաների լիգայի փլեյ-օֆֆ փուլում սեփական հարկի տակ ընդունեց Սլովակիան ներկայացնող «Ռուժոմբերոկ»-ին:

Հանդիպման մեկնարկը շատ հաջող դասավորվեց երեւանյան ակումբի համար:

Արդեն 4-րդ րոպեին հաշիվը բացեց Գրեգորիուն: Խփած գոլից հետո էլ «Նոա»-ն շարունակում էր վտանգավոր գրոհներ ձեռնարկել առավելությունը մեծացնելու համար, երբեմն ակտիվանում ու գրոհներ էին ձեռնարկում նաեւ «Ռուժոմբերոկ»-ի ֆուտբոլիստները, սակայն առաջին խաղակեսում նոր գոլեր չգրանցվեցին: Երկրորդ խաղակեսը նույնպես ավելի ակտիվ սկսեցին «Նոա»-ի ֆուտբոլիստները, սակայն 67-րդ խաղն անսպասելիորեն ընդհատվեց, քանի որ մարզադաշտը հոսանքազրկվել էր: Մրցավարը ստիպված եղավ թիմերին հանդերձարան ուղարկել: Որոշ ժամանակ անց խաղը շարունակվեց: «Նոա»-ն շարունակում էր ակտիվ գրոհներ ձեռնարկել, ինչն էլ տվեց իր արդյունքը: 79-րդ րոպեին մրցավարը 11 մետրանոց հարված նշանակեց Սլովակիան ներկայացնող ակումբի դարպասին, որը հստակ իրացրեց Գոռ Մանվելյանը:

Մրցավարի ավելացրած ժամանակում «Նոա»-ն կարողացավ մեծացնել իր առավելությունը. գոլի հեղինակ դարձավ Մատեուս Այասը:

Խաղն ավարտվեց «Նոա»-ի հաղթանակով՝ 3-0 հաշվով:

Թիմերի միջեւ պատասխան հանդիպումը կկայանա օգոստոսի 29-ին:

ԳՅՈՒՆԴՈՂԱՆԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ԵՐԿՈՒ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՑ

Գերմանացի կիսապաշտպան Իլկայ Գյունդողանը «Բարսելոնայից» հեռանալիս հրաժարվել է երկու տարվա աշխատավարձից, հայտնում է ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն:

33-ամյա ֆուտբոլիստը հանուն Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթի» վերադառնալու է նման քայլի դիմել:

Գյունդողանը նախքան հարկերի վճարումն այդ ընթացքում կարող էր վաստակել 37,5 միլիոն եվրո:

Գերմանիայի ազգային հավաքականի նախկին ավագը մեկ տարի անց վերադառնալու է «Մանչեսթեր Սիթի», որի կազմում խաղացել է 2016-2023 թվականներին: «Բարսելոնան» թույլ է տվել նրան հեռանալ անվճար: Գյունդողանը «Բարսելոնայի» կազմը համալրել էր նախորդ ամռանը եւ 51 խաղում խփել 5 գոլ, կատարել 14 գոլային փոխանցում:

● *Օգոստոսի 24-ին՝ ժամը 20:00-ին, Բաբելոն թատրոնում կցուցադրվի «Պատրանքներ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-4.000 դրամ:*

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որ ուսանողներին է կրթաթոշակ տրվում:

Կարինե Հարությունյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց եւ լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար, ինչպես նաեւ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին:

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝

1) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին,

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում եւ զանգվածային լրատվության միջոցներում),

3) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական եւ միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ:

Նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին: Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշում ընդունում է հիմնադիրը:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված եւ ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող 1-ին կուրսի ուսանողներին, ըստ սահմանված չափերի, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր օրվանից է նշանակվում կենսաթոշակը:

Հեղինե Մալխասյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակվում է՝

I կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից (բայց ոչ շուտ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում,

- բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում,
- կերակրողի մահվան (օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից (բայց ոչ շուտ, քան կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է կերակրողի մահվան (օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում,
- զինծառայությունից արձակվելու օրվանից, եթե սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողը դիմել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընքացքում:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված ժամկետներից հետո դիմելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այսպես է մեկնարկել «Ֆրեսկո» 2024՝ արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի 11-րդ միջազգային փառատոնը: Մինչեւ օգոստոսի 27-ը Հայաստանի տարբեր մարզերում կանցկացվեն տարատեսակ միջոցառումներ, վարպետության դասեր, ֆիլմերի դիտում-քննարկումներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11 + 16	+28 + 33
Կոտայքի լեռներ	+10 + 16	+28 + 30
Կոտայքի նախալեռներ	+20 + 23	+35 + 36
Գեղարքունիք	+11 + 16	+25 + 28
Լոռի	+ 14+ 18	+29 + 33
Տավուշ	+ 18+ 22	+31 + 36
Արագածոտնի լեռներ	+ 11 + 14	+17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18	+28 + 31
Արարատ	+ 23 + 25	+38 + 39
Արմավիր	+ 20+ 22	+37 + 38
Վայոց ձորի լեռներ	+11 + 14	+29 + 31
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23	+36 + 39
Սյունիքի հովիտներ	+21 + 24	+36 + 39
Սյունիքի նախալեռներ	+ 14 + 17	+30 + 32
ԼՂՀ	+ 13 + 16	+29 + 32
Երեւան	+30 + 32	+ 36 + 38

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.8.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*